նավս մեր առաքելաբար ի վերա ձեր իշխանութիւն կապելոյ և արձակելոյ՝ յերկինս և յերկրի. Զմեղուցեալսն զապըստամբեալսն յաւրինացն Աստուծոյ, և ի կանոնաց սրբոց հարցն՝ կըշտամբել և յանդիմանել, խրատել, սաստել, պատժել, մինչև ցուցանիցեն պըտուղս ապաշխարութեան. Զզղջացեալսն և զհնազան(դ)եալսն՝ սիրովն Քրիստոսի ընդունել ապաշխարութեան։ Որով և դուք ամենեքեան, սիրելի որդիք իմ ի Քրիստոս, զաստուածապատիւ և զսըրբասէր առաքելաշնորհ արքեպիսկոպոսդ ձեր ըՏէր Յոհաննէսդ, զիմ սիրելի և զհաւատարիմ որդիդ զպատվելի արքեպիսկոպոսդ ձեր՝ զսրբասէր այրդ, մեծավ պատվով և յոյժ սիրով ընկալարուք, իբր զորդի իմ սիրելի և որպէս զհրեշտակ Աստուծոյ և զառաքելական այր, զի յայսմ հետէ իմ յաւժարական հրամանաւս ինքդ Տէր Յոհաննէսդ է ձեզ զատիմի սեփական եպիսկոպոս և ոչ այլ ոք, որ է այր ընդիր։

Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունք՝ զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին աթոռոյ, զհաս տանց քահանայից և զամենայն ընտան(ե)աց նոցա, զերախայրիս կալոց և հնձանաց, զտերունականս և զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց կենդանաց և զանկարծամահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորա զըւարթ և առատ սրտիւ, որպէս զի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած։ Եւ մի՛ ոք կամ մեծ և կամ փոքր՝ յանդգնաբար իշխեսցէ հակառակիլ սըմա կամ բարձր հրամանիս մեր, և արգելցէ յիրաւանց տալոյ կամ խորեսցէ կամ յայլազգի անկանի և ուժ հասուցանէ Տէր Յոհանէսիս՝ պատվելի արքեպիսկոպոսիդ. Զի որ ոք հակառակ լիցի սմա՝ նայ այնպիսին առցէ յԱստուծոյ զանէծսն Կայենի, զմասն Յուդայի և զխաչահանուացն, և մնասցէ ի ներքոյ կապանաւք բարկութեանն Աստուծոյ և Սրբոյն Գրիգորի և մեր։ Որով աւրհնեալքն ի յարժանապատվեալ արքեպիսկոպոսդ ի Տէր Յոհաննէսէդ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և աւրոշեալքն՝ ի նմին մնասցեն մինչև զղջասցին հնազանդութեամբ, և առցեն զարձակումն ի Տէր Յոհաննէսէ արքեպիսկոպոսէդ։

Վասն որոյ ի մտանել դորա և գրաւորական հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ մեռոնիս, ի՛ջցէ և շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերա ձեր եւթնապատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ։ Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ ի ձէնջ և յաշխարհէդ ձեր։ Տացէ ձեզ չինութիւն անդորրութիւն և խաղաղութիւն. Բուսցէ և տնկցէ և ամենայն անդէոց ձեր այճողութիւն և քաջաբերութիւն. Պաճարէղէն անանոց ձեր անսղալ ծննդականութիւն. և ամենայն բարեաց ձեր լիութիւն և առատութիւն. ննջեցելոց հանկիստ և ողորմութիւն։ Եւ աւրհնեսցէ զձեզ զամենեսեան առ հասարակ հոգով և մարմնով Տէր Աստուած Յիսուս Քրիստոս։ Որպէս զի զառաւրեա կեանս ձեր բարիոք վայելելով, և երկնից արքայութեանն հանդերձ ձերաւք ննջեցելաւքն հասանիցէք ընդ ամենայն սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

Շնորհեցաք և ի ձեռն դորա՝ ձեզ պարգևս հոգևորականս զեղն աւծութեան,